## 143. ԷՐԿՈՒ ԹԱՄԲԱԼՆԻՆ

Մի մարդ մի կնիկ են ըլըմ։ Սհա՛նք էրկուսն էլ շատ թամբա՛լ էն ըլըմ։ Նա՛ նրա՛ն ա ասըմ՝ էդը տար ճո՛ւրը, նա էլ նրա՛ն ա ասըմ՝ Չէ՛, դո՛ւ տար։ Վերջը, վըեր մինն էլ ա ուզըմ չի տանի, ասըմ են. «Պայման անենք, սուս նստենք, խոսանք վըեչ. ով խոսա՝ նա էլ էդր տանի ճուրըս»։

Կնիկը գյնըմ ա հըրևանի տունը։ Մա՛ մենակ նստած մնըմ ա տանը։

Մըհել մի մարդ ա կյա՛լի տհա՛նց տուն, ասըմ ա. «Պա՛րի օրը»։ Մա՛ ձէն չի հանըմ։

Ասըմ ա. «Հիվա՞նդ ես»։ Խոսըմ չի։

— Աչկերդ տեսնը՞մ չի։

Խոսըմ չի։ Ինչ անըմ ա, մա՛ ձէն չի հանըմ։ Էս մարդը, վըեր շատ խոսըմ ա, սա՛ պատասխանըմ չի, տհա՛նց ըլա՛ծ-չլածը հվաքըմ ա, ածըմ մեշոկը, շլակըմ, քյնըմ։

Մխելիցը էդը, կնիկը կյա՛լիս ա տուն, տեսնըմ ա՝ սաղ խոնըշտորած, պա՛տ-մատերի կեսն էլ տարել են, կավըեչ։

Ասըմ ա. «Ա՛, ադա, էս տան դա՛տ-մատերը ո՞վ ա տարել»։

Մարդը ձայն ա ըլըմ ու սկըսըմ ա երգիլը, ասըմ ա. «Ջա՞ն, ջա՞ն, էդը դո՛ւ գես տանիլ ճուրը, առաջ դո՛ւ խոսացար»։